

257

Թիւ 28976
Մարտ 28, 1978

Արժանաշնորհ
Տ. Մամիկոն ԲԳՆԿ. Ոսկանեան
Հովիւ Ս. Գրիգոր Լուս. Եկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Մօնթրէալ.

Սիրելի Տէր Մամիկոն,

Ստացած ենք 1978 Փետրուար 18 եւ Մարտ 19 թուակիր Ձեր տեղեկազիրները, հաղորդելով թէ Ձեր նախագահութեամբ Փետրուար 11ին գումարուած համայնքիդ ժիական Ժողովին մէջ կատարուած է ժիական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժիական Ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ժիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել ժիական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց եւ եկեղեցւոյդ ենթակայ մարմիններու վարչութեանց ատենապետներու անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵԳԻՍԿՈԳՈՍ
Առաջնորդ

Լեւոն Գործեան
ՏԹԹ. Յարութիւն Արզումանեան
Վահէ Բէթլի
Միսաք Կուսսուզեան
Գէորգ Բէլթեքեան